

Ներմուծման ընթացակարգերը Հայաստանում

2017

Նյութը պատրաստված է Գործարարության աջակցման գրասենյակի կողմից



ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ հիմնադրվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից և նպատակ ունի Հայաստանում խրախուսել համագործակցությունն ու քաղաքականության շուրջ կառուցողական երկխոսությունը պետության և մասնավոր հատվածի միջև:

ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ է վերհանել գործարար միջավայրի վրա ազդող հիմնախնդիրները, կառավարությանը տրամադրել տեխնիկական աջակցություն բացահայտված խոչընդոտների հաղթահարման ռազմավարությունների/բարեփոխումների մշակման գործընթացում՝ զուգահեռաբար անցկացնելով խորհրդակցություններ գործարար համայնքի հետ և փոխանցելով առաջարկվող բարեփոխումների մասին վերջիններիս արծազանքը կառավարությանը:

ԴԵՏԱԿԱՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Պետական-մասնավոր երկխոսությունը, որպես գրասենյակի հիմնական գործառույթ, մասնավոր հատվածի զարգացման և բարեփոխումների հաջող գործընթացի համար կարևորագույն գործոններից մեկն է : Երկխոսության կիրառման փորձը մի շարք երկրներում արդեն ապացուցել է բարեփոխումների գործընթացի արագ և արդյունավետ ընթացքը: Բարեփոխումների ոլորագրման առանցքային գործոնն այն է, որ գործարարները ստանում հնարավորություն ներգրավվելու գործընթացի մեջ, հստակեցնելու եւ հասկանալու, թե ինչ նպատակների է իրենց կառավարությունը ձգտում հասնել առաջարկված բարեփոխումների փաթեթով, հետևաբար նրանք ավելի մեծ հավանականությամբ են ընդունում և ավելի պատրաստակամ են աշխատել բարեփոխումների ուղղությամբ գործնականում:

Ներքոնշյալ տեղեկատվությունը առնչվում է ՀՀ ներմուծման հետ կապված ընթացակարգերին, որոնց հետ ֆիզիկական անձինք և գործարարները առնչվում են Հայաստանում: Տվյալները հավաքագրվել են Գրասենյակի կողմից իրականացված հարցման և ներկրողների հետ կայացավ սեմինարի արդյունքում:



ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՓՄՁ-ՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴՈՒՐՄ ԲԵՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Գործարարության աջակցման գրասենյակի նախաձեռնությամբ կազմակերպվեց «Ներմուծման ընթացակարգը. խնդիրներ և լուծումներ» թեմայով սեմինարը՝ ներմուծող գործարարների և ՊԵԿ ներկայացուցիչների մասնակցությամբ:


Սեմինարի ընթացքում մասնակից գործարարները հնարավորություն ունենացան վերհանել և ՊԵԿ ներկայացուցչի հետ քննարկել ներմուծման ընթացակարգերում առկա խնդիրները և քննարկել լուծման առաջարկները:

Ներմուծման գործընթացներում առաջացող հետևյալ խնդիրները բարձրաձայնվեցին ՓՄՁ-ների կողմից.

- Յուրաքանչյուր ներմուծման համար գործարարը պետք է դիմի գործարարի գնի մեթոդի կիրառման համար անկախ այն հանգամանքից, թե որ երկրից և ինչ գնով ապրանք է գալիս: Թույլտվության տրամադրումը ներմուծման գործընթացը երկարաձգում է նվազագույնը 2-ից 3 օրով:
- Անգամ եթե հաշիվ ապրանքագրով ներկայացված գները ավելի բարձր են քան սահմանված կողմնորոշիչ գներն են, հայտարարատուին տեղեկացնում են, որ եթե վերջինս չդիմի գործարարի գնի մեթոդի կրառման համար, ապա գները «կլորացվելու» են, ինչը նշանակում է, որ մաքսային արժեքները լինելու են գներից ավելի բարձր՝ մինչև 10%:
- Եթե գործարարը ստացել է գործարարի գնի մեթոդի կիրառման թույլտվություն, սակայն իր հաշիվ ապրանքագրերի գները կողմնորոշիչ գների 50%-ից ցածր են, վերջինս չի կարողանում իրականացնել մաքսագերծումը քանի դեռ վերադաս մարմնից չեն զանգում և պահանջում գործարարի գնի մեթոդն իրականացնել:
- Թուրքիայից, Չինաստանից և Դուբայից շարունակվում են «կարգո» ներմուծումները կգ-ներով առանց փաստաթղթերի տրամադրման, ինչը խաթարում է թե փաստաթղթաշրջանառությանը և թե մրցակցության ձևավորմանը:
- Կիրառվող կողմնորոշիչ գները չեն համապատասխանում շուկայական գներին և լինում են դեպքեր, որ դրանք իրական գներից մի քանի անգամ բարձր են: Ստացվում է, որ ներմուծման համար վճարվելիք հարկերը և տուրքերը հավասարվում են տվյալ ապրանքի արժեքին: Անհրաժեշտ է սահմանել որոշակի ճկուն ընթացակարգ կողմնորոշիչ գների վերանայման համար:
- Լինում են դեպքեր, երբ գործարարի գնի մեթոդի կիրառման համար գործարարներից պահանջում են ուղարկող կազմակերպության արտահանման հայտարարագիրը, որը նախատեսված չէ ԵՏ2 N 376 որոշմամբ և գործարարները շատ հաճախ չեն կարողանում ստանալ այն:
- ԵՏՄ օրենսդրությամբ պայմանավորված 3500 դրամ մաքսավճարը գործնականում բարդաձևում է ներմուծման գործընթացն ու 1-ից 2 օրով երկարաձգում մաքսային գործընթացը, քանի որ այն սահմանված է փոխադրողի համար և որպեսզի ներմուծողն ինքը փոխադրողի փոխարեն վճարի այդ գումարը ստիպված է ֆիզիկապես այցելի Արարատյան մաքսատուն, մոտենա դրամարկը և հաշվապահություն: Անրաժեշտ է սահմանել առավել արդյունավետ ընթացակարգ: Իսկ եթե հավաքական բեռներ են և մեկ կոնտեյները պարունակում է մեկից ավելի բեռ, անհրաժեշտ է, որ բոլոր հայտարարատուները

առանձին-առանձին անցնեն ընթացակարգը, կատարեն վճարում, որպեսզի թույլ տան ապրանքը բեռնաթափել:

- Մաքսակետերում բացակայում են ինքնահայտարարագրման համար նախատեսված անվճար համակարգիչներ, որպեսզի հայտարարատուն որոշակի շտկումներ և փոփոխություններ անելու համար ստիպված չլինի վերադառնալ գրասենյակ, այլ կարողանա տեղում իրականացնել շտկումները և տպել նոր հայտարարագիրը:
- Անգամ ԵՄ երկրներից ներմուծված ապրանքների նկատմամբ կարող են կիրառվել հակազնագցման մեխանիզմներ, եթե գործարարը չկարողանա ապացուցել, որ ապրանքը արտադրված է ԵՄ երկրում:
- Գործընթացները իրենց բարդությամբ և ժամանակատարությամբ տարբերվում են ըստ մաքսատների. այն գործընթացը, որը Զվարթնոցում տևում է մի քանի րոպե, Արարատյան մաքսատանը կարող է տևել 1-ից 1,5 օր:



- Եթե գործարարը հաշիվ ապրանքագրերում ունի նմուշներ, ցուցատախտակներ կամ կատալոգներ, որոնք ուղարկվել են անվճար, դրանց համար կողմնորոշիչ գներով սահմանվում են մաքսային արժեքներ և հաշվարկվում են հարկեր և տուրքեր, անկախ այն հանգամանքից, որ տվյալ բեռը մաքսագերծվում է գործարարի գնի մեթոդով:
- Հայտարարագրի մերժման դեպքում հայտարարատուն սպասում է մինչև 10 օր, որպեսզի կարողանա նոր հայտարարագիր ներկայացնել:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մեր հետազոտությունը հիմնավոր իրականացնելու, և Հայաստան ներկրման ընթացակարգերի առավել իրատեսական վերլուծություն կատարելու և Կառավարությանը բարեփոխումների առաջարկություններ ներկայացնելու նպատակով Գրասենյակը նաև իրականացրեց մի հարցում, որի շրջանակներում անանուն տարբերակով տեղեկատվություն հավաքագրվեց 105 ՓՄՁ-ներից՝ հիմնականում միկրո բիզնեսներ՝ տարբեր ոլորտներ ներկայացնող:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՀԱՐԿԵՐԸ

Հարցման արդյունքների համաձայն որոշ ձեռնարկությունները նշել են, որ վճարում են մինչև 200% հարկ իրենց ներմուծվող ապրանքների համար, 62% -ը պատասխանել են, որ նրանք վճարել են 35% հարկ, իսկ հարցվածների 30% նշեցին, որ հարկը կազմել է 50%, հաշվի առնելով 20% ԱԱՀ և առավելագույնը 10% մաքսային տուրքերը, ընդհանուր գանձվող վճարները ներմուծված ապրանքների համար չեն կարող գերազանցել 32%: Ակնհայտ է, որ նման չափով գանձվող գումարները անհամաչափորեն բարձր են՝ դրդելով ՓՄՁ-ներին անցկացնել իրենց ներմուծումը ապօրինաբար՝ շահարկելով փաստաթղթավորման գործոնը: Առկա տոկոսադրույքների պարզ կիրառումը ներմուծման համար կշահագրգռի ՓՄՁ-ներին օգտագործել օրինական ընթացակարգերը: Այս պարագայում կօգտվեն նաև ՓՄՁ ընկերությունները, որոնք չեն օգտագործում անօրինական ընթացակարգեր և տեղի կունենա գնագոյացման համապատասխանեցում վերջիններիս համար՝ այսպիսով ստեղծելով ճանապարհի դեպի առավել կատարելագործված շուկա:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՀԱՐԿԵՐԸ



Մոտավորապես 71%-ը պատասխանել են, որ ներմուծումներն իրականացնում են բրոքերների միջոցով, թեև այն այլևս չի պարտադրվում օրենքով: Քանի որ երրորդ կողմի միջամտությունը այլևս պահանջ չի հանդիսանում, ապրանքների ներմուծման գործընթացը կարող է վերանայվել և պարզեցվել:

Բացի այդ, 50% -ը նշել են, որ ներկրման համար օգտվել են «Կարգո» տարբերակից: Բեռները չափվում, հարկվում և ներկրվում են վճարելով կգ-ների համար:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ


Հարցված բիզնեսների 20%-ը նշում են, որ իրենց ներմուծման ընթացակարգերը տևում է ավելի քան 15 օր, ևս 20%-ը՝ ավելի քան 7 օր ավարտելու, իսկ 36% բիզնեսներին հաջողվում է ամփոփել իրենց գործարքը 3 օրվա ընթացքում, սակայն շատ հազվադեպ են դեպքերը, երբ գործարքը ավարտին է հասցվում նույն օրը: Երկարատև ներմուծման ընթացակարգը ավելացնում է ծախսերը ձեռնարկությունների համար: Այս ծախսերը կազմում են 15.000 - 65.000 ՀՀ դրամ մեկ օրվա կտրվածքով: Ի հավելումն այս ծախսերի շատ ժամանակ է ծախսվում այս ամբողջ գործընթացի համար, որի ընթացքում ապրանքը կարող է վնասվել կամ կորցնել իր ակտուալությունը: Ներմուծման առավել կարճ ընթացակարգը կխնայի ժամանակ և գումար, ինչը թույլ կտա արագ շուկա մուտք գործել և գնագոյացում սահմանել: Ներմուծման առավել կարճ ընթացակարգը կօգնի կառուցել կատարյալ շուկա և խթանել օրինական փաստաթղթերի օգտագործումը:

Հիմնական ցուցանիշներ...



70%

Ներմուծումը Չիսաստանից եւ Թուրքիայից է



Ներկայիս ընթացակարգերը և կարգավորումները թանկ եւ ժամանակատար են Հայաստան ապրանքներ ներկրող ՓՄՁ-ների համար: Ներմուծման ընթացակարգերի վրա ծախսվող ժամանակը, ներմուծվող ապրանքների համար սահմանվող բարձր հարկերը ապրանքների պահման լրացուցիչ ծախսերը նպաստում են ՓՄՁ-ների կողմից ապօրինի փաստաթղթերի և անօրինական ներմուծման եղանակների օգտագործմանը :

Ստացված իրավիճակը թելադրում է առկա ընթացակարգերի և կանոնակարգերի կիրառման վերանայման անհրաժեշտություն: Նման քայլը կխրախուսի ՓՄՁ-ներին օգտագործել ներմուծման օրինական եղանակներ և կնպաստի առավել կատարելագործված շուկայի գոյացմանը: